ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՈՒՄ

2010 թվականի № -Ա

«ԴԻՎԱՆԱԳԵՏ» ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ
ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել «Դիվանագետ» պետական փակ բաժնետիրական ընկերությունը։

2. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին՝ «Դիվանագետ» պետական փակ բաժնետիրական ընկերության լուծարման աշխատանքներն իրականացնելու նպատակով ստեղծել լուծարման հանձնաժողով՝ դրա կազմում ընդգրկելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչներին, յուրաքանչյուրից մեկ անդամ.

3. Լուծարային հանձնաժողովի՝ «Դիվանագետ» պետական փակ բաժնետիրական ընկերության լուծարման հաշվեկշիռը կազմելու օրվա դրությամբ՝ այդ ընկերության դեբիտորական պարտքերի ստացման եւ այլ պահանջների իրավունքը հանձնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 14-ի № 752 որոշմամբ սահմանված կարգի 26-րդ կետին համապատասխան։

4. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին՝ «Դիվանագետ» պետական փակ բաժնետիրական ընկերության լուծարման գործընթացի ավարտից հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն նշված ընկերության լուծարումից հետո մնացած գույքի հետագա տնօրինման վերաբերյալ։

Զեկուցող՝ ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Դիվանագետ» պետական փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին ՀՀ կառավարության որոշման

«Դիվանագետ» պետական փակ բաժնետիրական ընկերությունը որևէ գործունեություն այլևս չի իրականացնում և ոչ մի կերպ չի նպաստում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը:

Այսպիսով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ. դեկտեմբերի 10-ի արտագնա նիստի № 51 արձանագրության քաղվածքի 2-րդ կետի 3-րդ ենթակետի՝ «Դիվանագետ» պետական փակ բաժնետիրական ընկերությունը ***հետաքրքրություն չի ներկայացնում նախարարության համար***:

Զեկուցող՝ ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյան